ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 սեպտեմբերի 2025թ. թիվ 517-Ա

Ն.ՎԵԼԻՑՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37.1-րդ, 37.2-րդ, 37.3-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023թ. դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 4-ի՝ ՀՀ Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 386 արձանագրությունը և հաշվի առնելով Ն.Վելիցյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Ժորիկի Վելիցյանին 2025 թվականի սեպտեմբերի 4-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով:

2. Նաիրա Վելիցյանի փորձաշրջանի ղեկավար նշանակել «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Պուշկինի անվան թիվ 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Համլետ Խումարյանին:

3. Ն.Վելիցյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նաիրա Վելիցյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀՀ Լոռու մարզի Սարատովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել դպրոցի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողականի հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Համլետ Խումարյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Ստորագրող
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
3905890216

2025-09-05 11:43:41 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 4
ք.Վանաձոր